ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«13» դեկտեմբերի 2017թվականի № 151-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017թ. դեկտեմբերի 1-ի N149-Ա հրամանով հաստատված Էներգետիկայի պետական տեսչության 2018 թվականի տեխնիկական ստուգումների տարեկան աշխատանքային ծրագիրը, Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի հուսալիության և անվտանգության չափանիշները պահպանելու նպատակով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական

տեսչության կողմից 2018 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացվելիք տեխնիկական ստուգումների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության պետին. ապահովել ցանկում ներառված էներգատեղակայանքներում տեխնիկական ստուգումների իրականացումը՝ սահմանված ժամկետներում:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և

բնական պաշարների նախարարի 13 -ը դեկտեմբերի 2017թ. N 151-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

h/h	Ստուգման օրերը	Ստուգման օբյեկտը, պատկանելիությունը	Ստուգում իրականացնող մասնագետները	Ստուգաթերթը, հարցերը	Ստուգման ժամանակաշրջանը
1	հունվարի 23-ից հունվարի 25-ը	«Նաիրի» 110/35/6կՎ լարման ենթակայան (ԵԿ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ	բաժնի 'պետ Արսեն Դանիելյան գլխավոր մասնագետ Արսեն Կարապետյան	Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր	2015 թ. հունվարից մինչև 2018թ. հունվար
2	Փետրվարի 20-ից փետրվարի 22-ը	«Հովտաշատ» 110/6/6 կՎ լարման ԵԿ «ՀԷՑ» ՓԲԸ	գլխավոր մասնագետ Սասուն Գուլոյան գլխավոր մասնագետ Գևորգ Մնացականյան	Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր	2015թ. փետրվարից մինչև 2018թ. փետրվար
3	Մարտի 5-ից մարտի 7-ը	«Շին. հրապարակ» 110/6 կՎ լարման ԵԿ «ՀԷՑ» ՓԲԸ	գլխավոր մասնագետ Գագիկ Միքայելյան գլխավոր մասնագետ Պատվական Հովհաննիսյան	Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր	2015թ. մարտից մինչև 2018թ. մարտ
4	Մարտի 12-ից մարտի 14-ը	«Մեծամոր» 110/10 կՎ լարման ԵԿ «ՀԷՑ» ՓԲԸ	գլխավոր մասնագետ Ռուբեն Մարգարյան գլխավոր մասնագետ Գևորգ Մնացականյան	Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր	2015թ. մարտից մինչև 2018թ. մարտ
5	Մարտի 28-ից մարտի 30-ը	«Ալավերդի» 110/35/10 կՎ լարման ԵԿ «ՀԷՑ» ՓԲԸ	բաժնի պետ Գևորգ Զաքարյան գլխավոր մասնագետ Ռուբեն Մարգարյան	Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր	2015թ. մարտից մինչև 2018թ. մարտ
6	Մարտի28-ից մարտի 30-ը	«Բերդ» 110/35/10 կՎ լարման ԵԿ «ՀԷՑ» ՓԲԸ	գլխավոր մասնագետ Արամայիս Ուլիխանյան գլխավոր մասնագետ Սասուն Գուլոյան	Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր	2015թ. մարտից մինչև 2018թ. մարտ